

Ընդ քեզ աւերակացոս
Ես ո՞րպէս թաղաւորեմ՝

Առաջարկն ինքնին խօսում է իր մասին. ինձ մնում է նկատել միայն, որ ձեռագիրները ոչ մի արդարացում ունին բառերի այս տեղափոխութեան համար (Տէ'ս, Խորեն. էջ 191-2) :

* * *

Վերջին միջոցը մեր հեթանոսական տաղաչափութիւնը վերականգնելու՝ Ը-երի տեղաւորումն է այնտեղ, ուր Լ. Գրէյի կարծիքով բաղաձայնների խճողում կայ: Այդ տեղաւորումների կիսից աւելին (24 հատը) միանգամայն աւելորդ են, քանի որ Ը-եր ստացող բառերը առանց այդ էլ Ը-ով են արտասանուած. աղբւղէս են օրինակ սրաթեւ, ձգեալ, դնացեալ, կոել, դուռն, բանակն եւայլն. աւելորդ է գրել սըրաթեւ, կըռել, դուռըն եւայլն: Զ. նախդիրը նա տառադարձում է զը փոխանակ ըզ գրելու՝ չգիտեմ ինքնաբերաբար՞ թէ հետեւելով Ն. Մառի վարդապետութեան, որի ասելով՝ հին հայերը ոչ թէ արտասանել են, օրինակ՝ ըզհաց, ինչպէս մենք ենք կարդում այսօր, այլ զըհաց: Այս խնդրի քննութեան մէջ մտնելը համարում եմ աւելորդ, քանի որ վանկային տաղաչափութեան տեսակէտով ըզհաց թէ զըհաց նոյն արժէքն ունին. երկուսն էլ երկվանկանի բառեր են:

Գալով միւս առաջարկներին՝ Լ. Գրէյ հետեւողական չէ նրանց գործադրութեան մէջ: Օրինակ նա առաջարկում է կարդալ. «Եւ հանեալ զուկէօզ շիկափոկ պարանն եւ անցեալ»... Այսինքն՝ «պարան» բառի ն-ն նա ուզում է որ կցենք հետեւորդ եւ-ին: Բայց միեւնոյն ժամանակ, նա ուզում է, որ կարդանք. «պարանըն ի մէջք օրիորդին Ալանաց ընկեց»: Արդ՝ ինչո՞ւ մի կասկածելի ձայնաւոր, ինչպիսին է ե-ը, կարող է կցել իրան մի ն. իսկ մի անվիճելի ձայնաւոր ինչպէս ի-ն է՝ չի կարող կցել. ինչո՞ւ «պարան-ն եւ», բայց ոչ «պարան-ն ի»: Այդ ինչուների հիմքն այն է, որ առաջին դէպքում կցելով է ստացում վանկերի պէտք եղած թիւը, իսկ երկրորդ դէպքում՝ առանց կցելու... բայց սա հիմք չէ, այլ քմահաճոյք: Ը-եր տեղաւորելու իր առաջարկներին մէջ

կան մի քանիսը, որ թէեւ անսովոր, բայց թոյլատրելի են, պայմանով սակայն, որ դրանով որոշ հետեւանքների հասնենք եւ միաժամանակ հետեւողաբար գործադրենք երգերի բովանդակ տարածութեան վրայ: Օրինակ նա առաջարկում է, որ կարդանք ոչ թէ քաջք, այլ քաջբք: Անհնարին չէ, որ յոգնակի բառերի ք-ն երբեմն Ըք հնչած լինեն: Անձամբ ես վաղուց կեղծ եմ այդ եզրակացութեան: Յայտնի է, որ շարականների մէջ երբեմն երգում են. «Տէր, փառք քեզ» կամ «անձինը նուիրեալը սիրոյն Քրիստոսի» եւայլն: Սա մի խնդիր է, որ յայտնում է այս խնդրին, այլ պարզապէս արտասանութեան դիւրացման եւ տաղաչափական տեսակէտով: Սակայն ընդունենք մի վայրկեան, որ հիմնաւոր է իր առաջարկը. այն ժամանակ ինչո՞ւ պէտք է արտասանենք «քաջբք», «մէջբք», բայց չասենք՝ «վիշապազունք»: Իր իսկ առաջարկը ինքը չի գործադրում հետեւողաբար: Հիմնուելով իմ անձնական հետազոտութեանց արդիւնքի վրայ՝ ես ոչ մի անպատահութիւն չեմ տեսնում ենթադրելու, որ երբեմն հին հայերը հնչած լինին հարսընութեան, հեծըցես, կացըցես, տեսըցես, տարըցին եւ մինչև իսկ վարդըգես. բայց ինչո՞ւ ուրեմն չարտասանել նաեւ «բըլըբով», «զըճըբէշ», այլ բըլըբով, զըճըբէշ: Այս առաջարկներին մէջ ամենից աւելի անհիմն ու անտեղին այն է, որ նրա կարծիքով մենք պէտք է կարդանք՝

Ի տուհայը դաւառէն
ԶըՔասաղը գետով.

Այս նշանաւոր Ը-երը ինձ յիշեցնում են հայերէնիս դասատուի վարկածը: Նրա կարծիքով մենք պէտք է կարդայինք.

Ընդ եղեգան փողը ծուխ ելանէր
Ընդ եղեգան փողը բոց ելանէր.

Այս ինքնակոչ Ը-երի պատճառը նրանց հեղինակների բուռն ցանկութիւնն է՝ իրենց ենթադրած համաչափ տողերը գտնելու Գողթան երգերի մէջ:

Սրանք են Լ. Գրէյի փորձերը՝ մեր հեթանոսական երգերի տաղաչափութիւնը գտնելու համար: Շատ ցաւալի է, որ եւրոպացի հայա-